փառաւոր և բարձր ձայներով լերան սուրբ եկեղեցիները կը շըքեղացնեն։ Աբեղաները երեք եկեղեցիներու կը բաժնուին և անդադար փոխն ի փոխ կը կատարեն ցերեկուան և գիշերուան պաշտաման կարգը. իսկ երեկոյեան և առաւօտեան ժամերգութիւնը կը կատարեն միաբանութեամբ։ Երեք եկեղեցիներէն մին մեծ է միւս երկուքէն, և Տէրունեան կը կոչուի. երկու փոքր եկեղեցիներուն մէջ պահուած են նշխարները ա՛յն առաքելոց՝ որ հիմնարկեցին այն օրը՝ երբ խօսեցան երեք տաղաւարներու մասին, և զանոնք կ'անուանեն սուրբ վկայարաններ և կը յիշատակեն Մովսէսի և Եղիայի։ Կիւրակէ օրուան աղօթքը կը կատարեն մեծ եկեղեցիին մէջ և փառաբանութեան համար կը յաճախեն նաև միւս երկու եկեղեցիները։ Ամէնքն ալ մաշկազգեաց են, ձեռնակերտիկ արուեստ ալ գիտեն. մէկը կը շինէ սփիւռիդ (կողով), ուրիշներ՝ սապատ, և ինչ որ պէտք է։ Իրենց շինածն ու շահածը միշտավառ կանթեղներու լուսավառութեան համար կը գործածեն, ինչպէս նաև իրենց հագած ոչխարի կաշիէ շինուած հանդերձներուն համար. նոյնպէս իրենց վաստակովը կը հայթայթեն հողաբիր գործիքները։ Շատ սիրով կ'օգնեն իրարու և կը հոգան զանոնք մանաւանդ՝ որ երբ պանդուխտ կը մնան հոն։ Բարոյապէս տկարներուն մօտ շուտով կը հասնին, և կը խրատեն, և կը փարատեն անոնց վիշտը ու կը հասկցնեն թէ որովայնի պարարումը բազմագլուխ գազան մ'է, որմէ պէտք է ըզգուշանալ, որպէս զի նոյն լերան վրայ երկրաւոր բարձրութենէն դէպի երկնաւոր բարձրութիւն, այսինքն Տիրոջը մօտ կարենան հասնիլ, ինչպէս Մովսէսը և Եղիան նոյն լերան վրայ Տիրոջը առջև փառօք երեցան...»։

Այս տողերը կատարեալ պատկերացումն են Թաբորի վանական նախնական կեանքին, որ առաւելապէս զարգացած էր Ե. և Զ. դարերուն, լատինական կամ խաչակրական դարերէն շատ յառաջ։

Անաստաս վրդ.ի Վանօրէից Ցուցակին ներածական մասին մէջ կը գտնենք հետևեալ տողերը. «Արդ, բազումք յԵգիպտոս և յԱղեքսանդրիա և Թեպայիտ և ի լեառն Սինէական կային մենաստանք Հայոց, նաև ի սուրբ լեառն Թաբոր, և ի յեզր ծովուն Տիբերիա և յայլ սահմանս Պաղեստինոյ, զոր յաղագս խնդրեն իւր աչօք տեսեալ. զամս բազումս կայի՝ զննելով յաշխարհին յայնմիկ և ամենայն